

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածին,
Սուրբ Մ. Մաշտոցի փողոց 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ
բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(Լրամշակված)



Պատվիրատու՝
«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ

«ԳրինԹայմ» ՍՊԸ՝
Տնօրեն՝ Ա.Հարությունյան

ԵՐԵՎԱՆ
2024

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 5

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ 6

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 9

 4.1 Առկա իրավիճակի նկարագրություն..... 9

 4.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը..... 11

 4.1.1. Էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ..... 15

 4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում..... 16

 4.1.3. Ջեռուցում, օդափոխություն, ծխահեռացում..... 16

 4.1.4. Էլեկտրամատակարարում..... 17

 4.2. Շինարարության կազմակերպում..... 18

 4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր..... 18

 4.2.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ 20

 4.2.3. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ..... 21

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 24

 5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը..... 24

 5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը 29

 5.3 Բուսական և կենդանական աշխարհ 29

 5.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ 31

 5.5 Տարածքի բարեկարգում և կանաչապատում 32

 5.6 Օդային ավազան..... 33

 5.7 Ջրային ռեսուրսներ..... 34

 5.8 Հողեր..... 35

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 37

 6.1 Սոցիալական գործոններ, ժողովրդագրական կազմ և բնակչություն 37

 6.2 Բնապահպանական ազդեցություններ 38

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 41

8. ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ..... 43

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ 45

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 47

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ 48

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 49

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 51

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՏԱԿԱԳԻԾԸ՝ ՄՈՏԱԿԱ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇՄԱՍԲ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԱՎՏՈԿԱՅԱՆՏԵՂԻՆԵՐԻ, ՀԱԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԸ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ) 73

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ՊԼԱՆ 79

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ 81

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՄ	անհատական պաշտպանական միջոցներ
ԲԱՄ	բողոքների արձագանքման մեխանիզմ
ԲԿՊ	բնապահպանական կառավարման պլան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարության նորմեր
ՇՄԱԳ	շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԶևԶ	ջրամատակարարում և ջրահեռացում
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության նպատակ	Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում
Զեռնարկող	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ Գրաս. հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս պող. 38, բն. 39 Հեռ.՝ (+374 95) 320 152 E-mail: ava.granit.office@gmail.com
Խորհրդատու կազմակերպություն (ՆԳՀ)	«ԳրինԹայմ» ՍՊԸ Հեռ.՝ (+ 374 93) 854 354 E-mail: greentime.arm@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Ս. Մեսրոպ Մաշտոց փող. 1/2
Կառուցապատման ենթակա հողատարածքի ընդհանուր մակերես	0.266 հա

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հավետվությունը մշակված է Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փող. 1/2 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման համար, որի նախաձեռնողը/պատվիրատուն հանդիսանում է «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ն: Նախատեսվող բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախագծային աշխատանքներն իրականացվել են «Միդիս ճարտարապետական արվեստանոց» ՍՊ կազմակերպության կողմից:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի կողմից 25.09.2023թ. տրված N CPP0-0000-8722 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ին պատկանող հողամասի սահմաններում:

Նախագծային լուծումների մշակման համար հիմք են հանդիսացել.

1. անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 03022023-04-0007 վկայականը,
2. տարածքի տեղագրական հանույթը,
3. 2023թ. ՀՀ ԳԱԱ «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող գործունեության տարածքում իրականացված երկրաբանական ուսումնասիրություններն ու եզրակացությունը,
4. Գոյություն ունեցող շինության վերաբերյալ «ՎԱԼԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 11.04.2023թ. տրված տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը,
5. N CPP0-0000-8722 նախագծման թույլտվությունը՝ տրված 25.09.2023թ.,
6. ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
7. Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների: Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) համաձայն, Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոց 1/2 հասցեում նախատեսված բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունը իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան:

ՇՄԱԳ հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լուսմների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ.

➤ ՀՀ օրենքներ

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար:
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշմամբ (Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին Կառավարության որոշում, 30.01.2003) սահմանվում են վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում են դրա հետ կապված հարաբերությունները:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք
- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

➤ **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.env.am/> ինտերնետային էջում)։

➤ **Միջազգային համաձայնագրեր.**

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)

- «Կայուն օրգանական ադոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրասահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև ադուլկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին» N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակը (2013թ.) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Առկա իրավիճակի նկարագրություն

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Էջմիածին Մուրբ Մ. Մաշտոցի փողոց 1/2 հասցեում և իրենից ներկայացնում է 0.266 հա մակերեսով տարածք, որտեղ ներկայումս տեղակայված է նախկին կինոթատրոնի շենքը: Գարուն կինոթատրոնի շենքը նախագծվել և կառուցվել է ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Սարգիս Գյուրգադյանի և Միքայել Ալեքսանյանի համահեղինակությամբ 1978 թվականին:

Համաձայն անշարք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, նշված հողատարածքը պատկանում է «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ին: Անշարք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը բերված է

[հավելված 1-ում](#), որում բերված են նաև տարածքի, ինչպես նաև գոյություն ունեցող շինության կոորդինատային տվյալները WGS-84 կոորդինատային համակարգով:

Վերջինիս համաձայն ստորև ներկայացվում են որոշ տվյալներ կապված տարածքի հետ, մասնավորապես.

- հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Գոյություն ունեցող նախկին կինոթատրոնի շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատումն իրականացվել է 2023 թ. «ՎԱԼԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից:

Գոյություն ունեցող կինոթատրոնի շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման արդյունքները տրվել են ելնելով շենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներից, նրա փաստացի տեխնիկական վիճակից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) քարտեզի ՀՀ Արմավիրի մարզի, Վաղարշապատ քաղաքի տարածքը գտնվում է առաջին գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն $a_{max}=0.3g$ արագացումով:

Իրականացված ուսումնասիրությունների համաձայն շենքի ֆիզիկական մաշվածությունը կազմել է 48%, ինչը նշանակում է, որ ըստ ՀՀ ՔՆ «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների» 2-րդ աղյուսակի, շենքի տեխնիկական վիճակը դասվում է 3-րդ աստիճանի (անբավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

Գնահատման արդյունքների համաձայն շենքի վերակառուցողական աշխատանքների ծախսերը կգերազանցեն համապատասխան տեխնիկատնտեսական արդարացված ծախսերը, ուստի ավելի նպատակահարմար է շենքի ապամոնտաժումը և նորի կառուցումը: Հակառակ դեպքում այդ շենքը հնարավոր չէ շահագործել նույն գործառնական նշանակության նպատակով, քանի որ տարածաշրջանի հնարավոր ուժեղ երկրաշարժի դեպքում շենքն ամբողջությամբ կամ մասնակի կփլուզվի, որը կբերի մարդկային զոհերի և նյութական վնասների: Հաշվի առնելով այն, որ շենքի գլխավոր ճակատին կից 6.0x24.0մ առանցքաչափերով հատվածամասն իրենից ներկայացնում է ճարտարապետական արժեք և կա դրա պահպանման խնդիր, ուստի առաջարկվել է.

- քանդել շենքը՝ պահպանելով շենքի գլխավոր ճակատին կից 6.0x24.0մ առանցքաչափերով հատվածամասը,
- ուժեղացնել պահպանվող գլխավոր ճակատին կից 6.0x24.0մ առանցքաչափերով հատվածամասը, քանի որ վերջինիս ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները չեն համապատասխանում ներկայուս ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին,

- շենքի ճարտարապետական տեսքը պահպանելու նպատակով առաջարկվում է կիրառել ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի 205 կետով սահմանված սեյսմապաշտպանության հատուկ համակարգեր՝ գոյություն ունեցող կառուցվածքի միացումը նորակառույց կոշտ կցակառույցի հետ,
- շենքի պահպանվող հատվածամասի հավաքովի ե/բ ծածկի սալերի վրա իրականացնել ե/բ վրաշերտ՝ ծածկերի սալերի միմյանց հետ միաձուլումն ապահովելու և հորիզոնական հարթության մեջ աշխատող կոշտ սկավառակներ ստանալու համար:



Նկար 1: Նախկինում գոյություն ունեցող կինոթատրոնի շենքի ճակատների տեսքերը

Գոյություն ունեցող նախկին կինոթատրոնի շենքի քանդումն իրականացվել է համաձայն քանդման թույլտվության՝ տրված էջմիածի քաղաքապետարանի կողմից 14.07.2023թ., որը բերված է [հավելված 2](#)-ում: Շենքը քանդվել է՝ պահպանելով շենքի գլխավոր ճակատին կից 6.0x24.0մ առանցքաչափերով հատվածամասը, որի միացումը նորակառույց կոշտ կցակառույցի հետ նախատեսվում է իրականացնել ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի 205 կետով սահմանված սեյսմապաշտպանության հատուկ համակարգերի կիրառմամբ՝ պահպանելով շենքի ճարտարապետական տեսքը:

4.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Սույն գործունեությամբ նախատեսվում է հայցվող տարածքում կառուցել բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիր, որի նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը և Վաղարշապատի համայնքապետարանի կողմից 25.09.2023թ. տրված N CPP0-0000-8722 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 3](#)-ում):

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել հին կինոշենքի տեղում՝ պահպանելով ճակատային մասի կամարաձև հատվածը, որը Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցի կողմից է, իսկ հանդիպակած կողմից հարում է Վազգեն Ա փողոցին: Կողային հատվածներում՝ մի կողմում բնակելի տներ ու շենքեր են, մյուս կողմում՝ էջմիածնի քաղաքապետարանի տարածքը:

Նոր բնակելի համալիրի նախագծումն իրականացվել է մանրակրկիտ ուսումնասիրելով գոյություն ունեցող կինոթատրոնի շենքի պատմությունը, դրա ճարտարապետական առանձնահատկություններն ու կառուցվածքը: Նոր բնակելի համալիրը կհամատեղի ժամանակակից տեխնոլոգիական լուծումներն ու հարմարավետությունը ավանդական ճարտարապետական տարրերի հետ, ինչը կապահովի տվյալ տարածքի կենսունակությունը, առողջ մթնոլորտն ու հաճելի միջավայրը:

Ամբողջությամբ կպահպանվեն հին կինոթատրոնի ճակատային հատվածի կամարաձև ճարտարապետական լուծումները, որպեսզի քաղաքի բակիչները կրկին հնարավորություն ունենան վայելելու հին ժամանակների կինոթատրոնի մթնոլորտը: Սա նուրբ և արժեքային նախագիծ է, որը կարևոր նշանակություն կունենա քաղաքի բնակիչների համար՝ համատեղելով բնակելի տարածքի հարմարավետությունն ու կինոթատրոնի մշակութային մթնոլորտը: Նախագծով այստեղ տեղակայված կլինեն 2 կինոդահլիճներ՝



նախատեսված մանուկների և մեծահասակների համար, ընդհանուր առմամբ 100 հանդիսատեսի համար: Նման համալիրի առկայությունը նոր շունչ կհաղորդի Էջմիածին քաղաքի մշակութային կյանքին:

Կամարների ներքո և երկրորդ հարկում տեղակայված կլինեն պատկերասրահներ, սրճարաններ և ժամանցի այլ վայրեր: Կինոթատրոնը և բնակելի համալիրը ունենալու են առանձին մուտքեր և առանձին ավտոկայանատեղիներ՝ նախատեսված 64 ավտոմեքենաների համար:

Նախատեսվող գործունեության տարածքը տրանսպորտային մոտեցմամբ հարում է Մեսրոպ Մաշտոց և Վազգեն Առաջին փողոցներին: Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը բերված է [հավելված 5](#)-ում, որում նշված են նաև համապատասխան հեռավորությունները մոտակա շենք-շինություններից: Ինչպես երևում է բերված սխեմայից գործունեության տարածքի սահմանագծին ամենամոտը գտնվում է 1 հարկանի քարե շինությունը՝ տեղակայված մոտ 11մ հեռավորության վրա:

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան համալիրի նախագծային լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,

- ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան բնակելի շենքեր»,
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»,
- ՀՀՇՆ IV-11.03.03-02՝ Ավտոկայանատեղեր,
- ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»,
- ՀՀՇՆ II-0.00-2006 «Քարե ամրանաքարե կառուցվածքներ. նախագծման նորմեր»,
- ՀՀՇՆ II-0.00-2006 «Հակահրդեհային անվտանգություն. նախագծման նորմեր»,
- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»,
- СНиП 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»,
- СНиП 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»,
- СНиП 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»,
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Համաձայն նախագծային լուծումների բնակելի համալիրը իրականացվելու է ե/բ կարկասային կոնստրուկտիվ համակարգով: Մասնաշենքերի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է, որի սխեմաներն իրենից ներկայացնում են երկու ուղղություններով կոշտ հանգույցներով, շրջանակային հիմնակմախք՝ ստորգետնյա և վերգետնյա հարկերով:

Կառուցապատման մակերեսը՝ անջրանցիկ տարածքները և պահպանված ճակատային կամարաշարը ներառյալ, կազմում են 2030 մ² (որից, նոր կառուցվող շենք՝ 1172 մ², պահպանված ճակատային կամարաշար՝ 424 մ², անջրանցիկ տարածքների մակերես՝ 434 մ² (անջրանցիկ տարածքների և կանաչապատ տարածքի մակերեսների հանրագումարը կազմում է տարածքի 40% կամ 1064 մ²): Բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրը բաղկացած է լինելու 2 ստորգետնյա և 10 վերգետնյա հարկերից, որի ճակատային հատվածը կհամալրի արդեն իսկ գոյություն ունեցող շենքի կամարաշարի հատվածը:

Ստորգետնյա հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղիներ ընդհանուր առմամբ 64 մեքենայի համար, որոնց համար հատկացված ստորգետնյա տարածքները նախատեսվում է կազմակերպել երկակի գործառնական նշանակությամբ՝ մասնավորապես նաև որպես թաքստոց: Անվտանգության ապահովման տեսանկյունից ավտոկայանատեղիները յուրաքանչյուր հարկում բաժանված են հրդեհային հատվածամասերի՝ ապահովված ավտոմատ հրշեջ ազդանշանային և ավտոմատ սպրիկլերային հրդեհաշիջման համակարգերով:

Բնակելի համալիրի առաջին հարկում հիմնականում տեղեկայված են լինելու առևտրա-հասարակական նշանակության տարածքները, որոնք իրականացված են բնակելի տարածքներից առանձնացված մուտքերով և հարմարեցված բնակչության սակավաշարժ և հաշվանդամ խմբերի ազատ տեղաշարժին:

Մնացած հարկերը լինելու են բնակելի, ընդհանուր թիվը 100 բնակարաններով, որոնք կունենան 52-97 մ² մակերեսներ:

Ավտոկայանատեղիների, հասարակական և բնակելի տարածքների սխեմաները ներկայացված են [հավելված 6](#)-ում:

Բազմաբնակարան համալիրն ապահովված է լինելու մարդաբեռնատար վերելակներով:

Աստիճանավանդակների հարթակներն ապահովված են բնական լուսավորությամբ, իսկ դեպի աստիճանավանդակ դռները հակահրդեհային են:

Համալիրի բնակելի շենքերի տանիքները նախատեսված են հարթ և կազմակերպված ջրահեռացմամբ: Համալիրի ճակատները նախատեսվում է իրականացնել տրավերտինով՝ տեղ-տեղ ապակյա փաթեթներով:

ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Բնակելի համալիրն ապահովված է լինելու թեքահարթակներով, հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, փողոցային լուսավորությամբ և այլն:

Նախատեսվող գործունեության ընդհանուր համայնապատկերը ներկայացված է ստորև բերված նկար 2-ում:



Նկար 2: Նախատեսվող բնակելի համալիրի ընդհանուր համայնապատկերը

Նախատեսվող գործունեության վերաբերյալ որոշ ընդհանուր տեխնիկական ցուցանիշներ բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեխնիկական ցուցանիշներ

ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Ընդհանուր ցուցանիշներ		
Հողատարածքի մակերես	մ ² (%)	2660 (100%)
Կառուցապատման մակերես՝ անջրաթափանց տարածքները և պահպանված ճակատային կամարաշարը ներառյալ	մ ² (%)	2030 (76%)
Կանաչապատման ընդհանուր մակերես	մ ² (%)	630 (24%)

Կառուցապատվող տարածքում բացակայում են ծառաթփատեսակները: Տեղ-տեղ հանդիպում են ինքնաբերաբար աճող մանր թփեր, որոնք որևէ արժեք չեն ներկայացնում: Տարածքի կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախագծային լուծումների համաձայն համալիրի ապագա բնակիչների համար նախատեսված են բարեկարգ կանաչապատ գոտիներ: Բակային հատվածն ապահովված է լինելու կանաչապատ միջավայրով՝ տարբեր դեկորատիվ և մշտադալար ծառերի համադրմամբ, հանգստի գոտիներով, զրուցարաններով, խաղահրապարակներով, ճեմուղիներով ու ներբակային ճանապարհներով, որոնք կապահովվեն առողջ և ներդաշնակ միջավայր:

4.1.1. Էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ

Բնակելի համալիրի մասնաշենքերը նախատեսվում է իրականացնել բարձր էներգաարդյունավետության հիմնական մեթոդների կիրառմամբ: Համալիրի էներգաարդյունավետությունը համապատասխանեցվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին:

Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են ջեռուցման համակարգերին, տաք ջրամատակարարման համակարգերին, օդի լավորակման համակարգերին, ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը, ինչպես նաև լուսավորության համակարգերին:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ուղղությամբ, ի թիվս այլոց, նախատեսվում են իրականացնել համալիր միջոցառումներ երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների և վիտրաժների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ:

Էներգախնայողության նպատակով համալիրում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
- արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,

- ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների /пеноплекс/ կիրառում,
- օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի 1/2 հասցեում կառուցվող բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների համաձայն, որում հաշվի են առնվել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները: Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև.

- ճարտարապետա-շինարարական գծագրերը և գլխավոր հատակագիծը,
- տեղանքի տոպոգրաֆիական հանույթը,
- տարածքի ինժեներա-երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքները:

ՋնՋ համակարգերի միացումը քաղաքային համապատասխան ցանցերին նախատեսվում է իրականացվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն (տեխ. պայմանը բերված է [հավելված 4](#)-ում):

Ջրամատակարարումը կիրականացվի 400մմ տրամագծի խողովակով Անդրանիկի փողոցով անցնող ջրատարից՝ շրջանցելով տարածքով անցնող 110մմ տրամագծով ջրագիծը, իսկ կոյուղին նախատեսվում է միացնել տարածքի հարևանությամբ անցնող կոյուղատարին՝ 400մմ տրամագծի խողովակով:

Ինժեներական լուծումները ներառում են՝

- խմելու-տնտեսական սառը և տաք ջրամատակարարումը,
- տնտ. կենցաղային կոյուղին,
- հեղեղատար կոյուղին:

Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Հակահրդեհային հիդրանտի միացումը նախատեսվում է իրականացվել տարածքի շրջանցվող 110 մմ տրամագծով ջրագծից: Բնակելի համալիրն ապահովված է նաև ավտոմատ հրշեջ ազդնշանային, ինչպես նաև ավտոմատ սպրինկլերային հրդեհաշիջման համակարգերով:

4.1.3. Ջեռուցում, օդափոխություն, ծխահեռացում

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի 1/2 հասցեում նախատեսված բազմաֆունկցիոնալ համալիրի ջեռուցումն ու օդափոխության համակարգերի տեխնիկական նախագիծը կատարվել է համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից

տրված տեխնիկական պայմանի (տես՝ [հավելված 4](#)) և ՀՀ գործող շինարարական հետևյալ նորմերի և կանոնների հիման վրա.

- ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»,
- ՀՀՇՆ 24-01- 2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»,
- ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»,
- ՀՀՇՆ II-7.02-951 «Շինարարական ջերմաֆիզիկա»:

Ջեռուցում: Համալիրում նախատեսված է անհատական ջեռուցում, որի նպատակով զագամատակարարում կիրականացվի համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի (բերված է [հավելված 4](#)–ում):

Ջեռուցման համակարգը ջրային ջեռուցման երկխողովականի համընթաց շարժումով համակարգ է: Ջերմատարը ջուրն է՝ 80-65°C, ջեռուցման խողովակները պոլիպրոպիլենային՝ PPR, PN20: Որպես ջեռուցման սարքեր կծառայեն այլումինե ռադիատորներ, որոնց ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ ավտոմատ փականներ:

Օդափոխություն: Բնակելի համալիրում նախատեսված է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն: Համալիրից օդի արտածումն իրականացվելու է խոհանոցներից՝ բնական եղանակով (արտածման ճաղաշարերով), իսկ սանհանգույցներից՝ առանցքային օդափոխիչների միջոցով: Այդ նպատակով նախատեսված են օդատարներ: Բնակելի հատվածի միջանցքներում նախատեսված են ծխահեռացման համակարգեր: Ավտոկայնատեղիի համար նախատեսված է մեխանիկական դրդամբ ներածման, արտածման, ծխահեռացման, հակահրդեհային օդափոխության համակարգեր:

Ծխահեռացում: Ավտոկայնատեղիների համար նախատեսված են հակահրդեհային օդափոխության համակարգեր: Ծխահեռացման համակարգերը հրդեհի ժամանակ սպասարկում են ավտոկայնատեղիները, իսկ օդատար համակարգի միջոցով կոմպենսացվում է հրդեհի ժամանակ հեռացվող օդը: Հրդեհի դեպքում ներածման-արտածման համակարգերն ավտոմատ անջատվում են և անմիջապես միանում է ծխահեռացման օդամղիչը, որպեսզի ապահովվի մարդկանց տարահանումը ավտոկայնատեղիներից:

Բնակելի համալիրի աստիճանավանդակներում և վերելակի հորաններում նախատեսված են օդի դիմհարներ: Բնակելի հարկերի միջանցքներից ևս նախատեսված է ծխահեռացում՝ համապատասխան համակարգերի միջոցով: Բոլոր ծխատարները և օդի դիմհարի օդատարները մեկուսացվելու են հրակայուն մեկուսիչով:

4.1.4. Էլեկտրամատակարարում

Բազմաֆունկցիոնալ համալիրի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան, որի հետ կապված մշակված են համապատասխան նախագծային լուծումները՝ իրականացված համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության կողմից:

Բնակելի համալիրի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել նոր կառուցվող ենթակայանի 0.4կՎ հատոններից: Նոր ենթակայանը տեղակայված է լինելու բնակելի համալիրի ստորգետնյա երկրորդ հարկում, որի էլեկտրական սնուցումը իրականացվելու է ՏԵ4613-ի 10կՎ ԲՄ-ից՝ համաձայն ՀԷՑ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (բերված է [հավելված 4](#)-ում): Պահանջվող դրվածքային հզորությունը 1738կՎԱ է, իսկ սնող ցանցի լարումը 0.4 կՎ:

Էլեկտրական էներգիայի հիմնական ընդունիչներն են հանդիսանում էլեկտրական լուսավորությունը, վարդակային ցանցը, օդափոխման սարքավորումները:

Էլեկտրական ընդունիչները էլեկտրական ցանցին միացնելու համար նախատեսված են խրոցակային վարդակներ /անջատիչներ/ հողանցման կոնտակներով: Թաց պրոցեսների տարածքներում էլեկտրական ընդունիչների միացման վարդակները ընդունված են հողանցման կոնտակներով, պաշտպանության համապատասխան մակարդակով:

Էլեկտրական ցանցի բոլոր էլեկտրական վարդակները ստորաբաժանվում են հիմնականների ու լրացուցիչների: Հիմնական վարդակները տեղադրվելու են սենյակներում, պատերի վրա՝ գետնից 80սմ բարձրությամբ: Խմբային ցանցը նախատեսվում է երկջիլ մալուխից, որը թաքնված անցկացվելու է պատերի ակոսիկների միջով՝ ծեփի տակով, և կախովի առաստաղների վաքերի տակով:

Նախատեսված է ընդհանուր աշխատանքային լուսավորում բոլոր սենյակներում ու միջանցքներում, ինչպես նաև շենքի մուտքերում ու ելքերում: Վթարային լուսավորության լուսամփոփները միացված են վթարային լուսավորության գծին և աշխատանքային լուսավորության լուսամփոփների ընդհանուր քանակից առանձնանում են հատուկ նշաններով:

Լուսամփոփների տեսակներն ու կատարումը համապատասխանում է տարածքների նշանակության և միջավայրին: Սենյակների ու միջանցքների ընդհանուր լուսավորության համար կիրառվում են հայելային արտացոլիչով գրասենյակային լուսամփոփներ: Թաց/խոնավ պրոցեսների տարածքներում կիրառվում են առնվազն IP44 պաշտպանության աստիճանով լուսամփոփներ, իսկ փողոցային լուսավորության համար՝ առնվազն IP66 պաշտպանության աստճանով:

Բնակելի հատվածներում, աստիճանավանդակներում և միջանցքներում նախատեսված է աշխատանքային և տարհանման լուսավորություն:

4.2. Շինարարության կազմակերպում

4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները:

Մինչ շինարարական աշխատանքների սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված ՏԻՄ-երի կողմից՝ կապված գոյություն

ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլատվությամբ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- շինարարական նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին (շին. հրապարակի ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, գիշերային լուսավորվածության ապահովում),

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Էջմիածին քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Էջմիածին և Երևան քաղաքների և նրանց հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում:

Շինարարական հրապարակը ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, ավտոմեքենաների անիվների

լվացման կետերը և այլն կազմակերպվելու է բացառապես համալիրի վարչական տարածքի սահմաններում: Շին. հրապարակի կազմակերպման սխեման, ինչպես նաև շինարարության ժամանակացույցը բերված են [հավելված 7](#)-ում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանագատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Չտեսակավորված կենցաղային աղբը (ծածկագիր՝ 9120040001004), որի ընդհանուր առավելագույն քանակը շինարարության համար կանխատեսվում է մոտ 8 տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

4.2.2. Շինարարական անձնակազմ և հիմնական մեքենա-մեխանիզմներ

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը, որի արդյունքում գնահատվել է 28 ամիս կամ 616 շին/օր:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների առավելագույն թիվը շինարարության գնահատվում է առավելագույնը 50 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 5 մարդ,
- բանվորներ՝ 45 մարդ (ներառյալ՝ օժանդակ տնտեսություններ):

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Տեխնիկական միջոցների անվանացանկ*

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
---	------------------------------	--------------------	------------

1	բուլդոզեր	CAT C6.3	1
2	թրթուրավոր էքսկավատոր 1.85մ³ շերտի տարողությունը	HYUNDAI R200LS	1
3	թրթուրավոր էքսկավատոր փխրեցնող	Hyundai R 380 C 9 SH	1
4	Աշտարակային կոունկ (սլաքի երկարությունը՝ 56.0 մ, կեռիկի բարձրությունը՝ 45.015.0մ, բեռնունակությունը՝ 8-1.3	QTZ 80	
5	ավտովերհան	-	1
6	տեղում բետոն պատրաստելու սարք	-	1
7	ավտոբետոնախառնիչ	ABC	2
8	բետոնամուղ պոմպ	Volvo FM12	2
9	կողավոր ավտոմեքենա	-	2
10	ավտոինքնաթափ, 25 տ	KMA3	3
11	թրթռիչ մակերեսային էլեկտրական	ՊB -117	2
12	թրթռիչ խորքային էլեկտրական	U-414	2
13	թրթռան	ՊB -113	2
14	էլ. եռակցման սարք	US-2	3
15	հատակներ հարթեցնող	UO-179 և UO-155	3
16	ձեռքի տոփանիչ	Ի-157	3
17	հետհար մուրճ	ՄՊ-5Պ	3
18	էլեկտրամուրճ	ԻԷ-4207	3
19	կոմպրեսորային կայան	-	2
20	գլղոն	A-6223A	1
21	կենտրոնախույզ պոմպ	U-245	1
22	փոխադրիչ ժապավեն	SU-13	-
23	ձյուֆահալ սարք	UO-179	1

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված յուրաքանչյուր բլոկի համար խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

4.2.3. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ

Հողային աշխատանքներ: Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, ըստ որի շինարարության ընդհանուր հողային հանույթը կազմում է մոտ 9900 մ³ է, որից ետլիցքը՝ 1100 մ³:

Շինարարական աղբի ընդհանուր քանակը կազմում է մոտ 8800 մ³, որն իրենից հիմնականում ներկայացնում է 4-րդ դասի վտանգավորության թափոն (տես՝ Առաջացած թափոններ): Այն կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, որի վերաբերյալ տեղեկանքը Վաղարշապատի համայնքապետարանից նախատեսվում է ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում: Լիցքային աշխատանքների ժամանակ լիցքի մեկ շերտում անթույլատրելի է տարատեսակ գրունտների օգտագործումը: Լիցքային գրուտի յուրաքանչյուր շերտ պետք է լցնել հողային պաստառի ողջ լայնությամբ՝ եզրից դեպի կենտրոն:

Համաձայն ՇՄՆ «[Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն](#)» ՊՈԱԿ-ի [կողմից հրապարակված տվյալների](#), հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է սահմանափակ տարածքում, որտեղ կիրառվելու են բացասական ազդեցությունները մեղմացնող բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Առաջացած թափոններ: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի) և իրենցից ներկայացնում են շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հետևյալ թափոնատեսակները.

- շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած չտեսակավորված կենցաղային աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ ծածկագիր 9120040001004, որի ընդհանուր քանակը շինարարության ընթացքում կանխատեսվում է առավելագույնը 8 տ: Այն կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- շինարարական աղբը՝ ծածկագիր 9120060101004, շուրջ 8800 մ³ ծավալով, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

Բոլոր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վաղարշապատի համայնքապետարանի հետ համաձայնեցված ձևաչափով, որի վերաբերյալ համապատասխան համաձայնությունները ձեռք կբերվեն մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների հաշվառումն իրականացվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շինարարական տեխնիկայի վառելիքով լիցքավորումը և յուղումը նախատեսվում է իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում, իսկ դրանց տեխնիկական սպասարկումը՝ համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Հետևաբար նախատեսվող գործունեության արդյունքում յուղերի, քայուղերի, նավթամթերքների և դրանց մնացորդների տեսքով վտանգավոր թափոնների առաջացում չի կանխատեսվում:

Բնառեսուրսների օգտագործում: Շինարարական աշխատանքների ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ հետևյալ նպատակներով.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Հաշվի առնելով շինարարության ընթացքում միաժամանակյա շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը, ջրցանի հաշվարկը կատարվել է շինարարության առավելագույն տարածքի չափի համար: Մանավորապես.

$$U_1 = S_1 \times K_1 \times T_1, \text{ որտեղ}$$

S - ջրվող տարածքի մակերես, 2660 մ²,

K - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²):

T - շինարարության ընթացքում աշխատանքային օրերի թիվը, 616 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U_1 = 2660 \times 0.0015 \times 616 = \mathbf{2457.84 \text{ մ}^3}$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n_1 \times N_1) T_1, \text{ որտեղ}$$

n - ԻՏ աշխատողների թվաքանակ, 5 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T₁ - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 616 օր

n₁ - բանվորների (այդ թվում՝ վարորդներ) թվաքանակ, 45 մարդ

N₁ - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 45 \times 0.025) \times 616 = \mathbf{742.28 \text{ մ}^3}$$

Շինարարության ընթացքում պահանջվող առավելագույն ջրապահանջը կկազմի՝

$$2457.84 \text{ մ}^3 + 742.28 \text{ մ}^3 = \mathbf{3200.13 \text{ մ}^3}$$

Շինարարական աշխատանքների ընթացքում շին. հրապարակում առաջարկվում է նախատեսել կոնտեյնների տիպի հատուկ շինություններ.

- պահակակետ - 1 հատ,
- գրասենյակ - 1 հատ,
- հանդերձարան - 2 հատ,
- լվացարան-ցնցուղարան - 2 հատ,
- ճաշարան - 2 հատ,
- պատրաստի գուգարանախցիկներ - 2 հատ:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրապահանջն ապահովվելու է քաղաքային ջրազծից՝ «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն, որը բերված է [հավելված 4](#)-ում:

5. ԵԼԱԿԵՏԱՑԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը

Ուսումնասիրվող տարածքը ընդգրկված է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասում՝ Էջմիածին համայնքում: Էջմիածին քաղաքը տեղակայված է մարզկենտրոն Արմավիրից 25կմ, իսկ Երևանից մոտ 17կմ հեռավորության վրա: Ճանապարհային հատումների հանգույցներ են հանդիսանում Երևան-Արմավիր-Գյումրի, Աշտարակ-Մարգարա միջպետական նշանակության մայրուղիների և տեղական նշանակության ավտոճանապարհների հատումները: Էջմիածին քաղաքը տեղակայված է ծովի մակերևույթից 853մ նիշի վրա:

Էջմիածին համայնքի տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական հասակի լճային-այլուվիալ նստվածքները, որոնք ներկայացված են՝ ճալաքարակոպճային առաջացումներով:

Հետազոտվող տարածքը գտնվում է Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոց 1/2 հասցեում և իրենից ներկայացնում է հարթ տարածք:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Տարածքի մակերեսն ունի ոչ մեծ թեքություններ՝ հյուսիսից հարավ և արևելքից-արևմուտք դեպի Արաքս գետի կողմը:

Կլիմա: Ուսումնասիրվող տարածքը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանության» գտնվում է տաք կլիմայական շրջանում: Էջմիածին քաղաքի կլիման բնութագրվում է որպես ցուրտ ձմեռով և շոգ ամառով չոր, խիստ ցամաքային կլիմա: Տարվա ամենացուրտ ամիսը հունվարն է՝ բացարձակ նվազագույնը -31°C (Էջմիածին կայան), ամենատաքը՝ հուլիս-օգոստոսը առավելագույնը $+41^{\circ}\text{C}$ (Էջմիածին կայան): Օդի տարեկան միջին ջերմաստիճանը $+11.7^{\circ}\text{C}$, իսկ տարեկան միջին տեղումները կազմում են 274մմ:

Արմավիրի օդերևութաբանական կայանի դիտարկումների տվյալների համաձայն ջեոուցման ժամանակահատվածի տևողությունը կազմում է 154 օր (31 հոկտեմբեր – 2 ապրիլ):

ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերի համաձայն՝ Արմավիրի տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները ներկայացված են ստորև.

Նշում 3. Օդի միջին ջերմաստիճան (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Էջմիածին	-3.7	-1.2	5.1	12.2	17.1	21.2	25.2	25.1	20.1	13.0	6.1	-0.4	11.7	-31	41
Արմավիր	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5

Աղյուսակ 4. Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Բնակավայր	մ.ա./մ.ն.	ըստ ամիսների, °C											Տարեկան	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
Արմավիր	մ.ա.	1.4	4.8	12.0	19.4	24.5	29.4	33.4	33.1	28.5	21.0	12.5	4.4	18.7
	մ.ն.	-8.4	-6.1	-0.4	5.8	10.6	14.3	17.8	16.9	11.7	5.9	0.5	-4.8	5.3

Աղյուսակ 5. Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայր	ա./ն.	ըստ ամիսների, °C											Տարեկան	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
Արմավիր	ա	17.9	21.0	28.5	33.0	35.0	38.8	41.5	40.5	37.8	35.0	24.5	19.6	41.5
	ն	-31.4	-31.0	-22.7	-9.6	0.3	3.1	7.3	7.4	-2.0	-6.6	-17.3	-30.0	-31.4

Աղյուսակ 6. Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Արմավիր										
Դեկտեմբեր	1.5	18	0.5	11	0.1	5	0.01	1		
Հունվար	4.7	30	1.9	22	0.5	7	0.01	1		
Փետրվար	2.7	20	1.1	14	0.4	11	0.03	2		

Աղյուսակ 7. Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8
Արմավիր								
Հունիս	26.9	30	14.0	30	1.5	8		
Հուլիս	30.8	31	27.5	31	9.9	24	0.1	2
Օգոստոս	30.8	31	27.4	31	7.9	25	0.1	3

Աղյուսակ 8. Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C) (առավելագույնի միջինը՝ ա.մ., և նվազագույնի միջինը՝ ն.մ.)

Բնակավայր	ա.մ./ն.մ.	ըստ ամիսների											Տարեկան	
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
Արմավիր	ա.մ.	7.9	11.5	19.8	26.3	30.6	35.0	37.7	37.3	34.1	27.5	19.6	11.4	38.3
	ն.մ.	-16.8	-14.9	-7.9	-1.2	4.8	9.5	13.0	12.5	6.1	-0.3	-6.2	-12.2	-19.2

Աղյուսակ 9. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ.	Սեպ.	Հոկ.	Նոյեմ.	Դեկտ.		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
Արմավիր	75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	75	60	46	30

Աղյուսակ 10. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայր	Տեղումների քանակը միջին ամսական մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	օրական առավելագույն ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
Էջմիածին	18	20	26	37	45	26	15	10	10	25	24	18	274	106	168
	14	22	25	26	29	46	34	25	27	25	46	18	46		
Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254	96	158
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47		

Աղյուսակ 11. Չյան ծածկույթ

Բնակավայր	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Էջմիածին	48	44	-	-
Արմավիր	42	38	92	70

Աղյուսակ 12. Քամիներ

Բնակավայր	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ Միջին արագությունը, մ/վ ուղղությունների								Մեղրքի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ		
		Հուլիսին	Հուլիս-սեպտեմբեր	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Հունվար-փետրվար								
Արմավիր	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	Արլ	1.9	ՀսԱրմ	2.8		
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8								
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11							52	1.3
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7								
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8							55	1.1
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6								
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14							72	0.6
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8								

Աղյուսակ 13. Քամու հաշվարկային արագություն

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիների քանակը (>15մ/վ օրերի միտումը)	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
Արմավիր	917.1	0.9	15	24	26	27

Աղյուսակ 14. Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Բնակավայր	Օդի ջերմաստիճանը, °C									Դիտար կված առավելագույնը
	ամենատաք օրվա		Ամենաշոգ ամսվա միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						
	ապահովվածություն	0.95		0.99	ապահովվածություն, %					
	1	2	5	10	20	50				
Արմավիր	33	32	26.1	42	42	41	40	39	38	42

Աղյուսակ 15. Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայր	Օդի ջերմաստիճանը, °C														Դիտար կված նվազագույնը
	ամենացուրտ օրվա			ամենացուրտ հնգօրյակի			ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	ամենացուրտ ամիսների միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						
	ապահովվածություն			ապահովվածություն					ապահովվածություն, %						
	0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92	1	2	5	10	20	50			
Արմավիր	-23	-22	-21	-20	-19	-18	-2.1	-5.1	-35	-33	-30	-28	-24	-19	-31

Հիդրոերկրաբանական պայմանները: Հիդրոերկրաբանական տեսակետից Էջմիածին համայնքը հանդիսանում է լավ ջրաթափանց և ջրանցիկ գոտի: Հետազննվող տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Դաշտային հորատման աշխատանքների ընթացքում տեղամասում հորատված հորատանցքներով ստորգետնյա ջրեր բացահայտվել են. հորատանցք 1-ում՝ 6.8մ խորությունից, հորատանցք 2-ում՝ 7.5մ խորությունից, հորատանցք 3-ում՝ 6.7մ խորությունից, հորատանցք 4-ում՝ 6.2մ խորությունից:

Քանի որ գրունտային ջրերը բացահայտվել են սկսած 6.2մ-ից, ապա մինչ փոստրակում գրունտի քանդման աշխատանքները կատարելը նախատեսվում է իրականացնել գրունտային ջրերի հեռացման դրենաժային ցանց:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:

Երկրաբանական պայմաններ: Ուսումնասիրության ենթակա ենթաշրջանի սահմաններում տարածված ամենահին բնահող-ապարները ստորին չորորդականի և պալեոգենի հասակի լճային, լճա-ալյուվիալ և հրաբխային գոյացումներն են, որոնց զամարային հզորությունը 300-400 մ է:

Վերնաշերտերում ամենալայն տարածքում մունեցող բնահողերը ներկայացված են գետա-լճային ծագման ավազա-կավային նստվածքներով, որոնք տարբեր հորիզոնների վրա շերտադասվում են ավազա-կոպճա-ճալաքարային ջրատար շերտերով:

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածք: Հետազոտվող տեղամասում գրունտների լիթոլոգիական կազմի, ֆիզիկամեխանիկական հատկությունների, հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման համար կատարվել են.

- Տեղազննում
- Հորատանցքների անցում՝ թվով 4 հատ: ՄԴԵ-50M հաստոցով փորվել է 4 հատ հորատանցք՝ յուրաքանչյուրը՝ 23գծ/մ խորությամբ, ընդհանուր 92 մետր ծավալով:
- Հորատանցքներով աշխատանքների արդյունքում լիթոլոգիական կտրվածքների, գրունտների շերտերի ու դրանց հզորությունների, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայության որոշում:
- Գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի համար:
- Տարածքի վերաբերյալ արխիվային նյութերի հավաքագրում, վերլուծություն և ընդհանրացում:
- Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:
- Դաշտային աշխատանքների և հավաքագրված նյութերի ամփոփում, եզրակացության կազմում:

Հորատանցքների իրականացումը, ստացված արդյունքները և ֆոնդային նյութերի տվյալները թույլ են տվել շերտերի նկարագրությունը տալ մինչև 23,0մ խորությամբ՝ համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի):

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից կատարված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների, հորատման, լաբորատոր և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են գրունտների 2 շերտեր:

Տեղամասի **երկրաբանական** կտրվածքը ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով (վերնից-ներքև).

- **Շերտ-1.** Ավազակավեր՝ շագանակագույն, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 20-25% պարունակությամբ: Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի (§33⁹) III կարգ է:
- **Շերտ-2.** Ալյուվիալ ծագման լավ գնդավորված ճալաքարակոպձային նստվածքներ, տեղ-տեղ գերխոնավ, 10-15% գլաքարով և մոտ 20% խառնավազի լցանյութով: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի (§6⁹) IV կարգի է:


Ուսումնասիրվող տեղամասում շինություններ կառուցելու համար որպես բարենպաստ հիմնատակ առաջարկվում է շերտ 2-ը՝ ճալաքարակոպձային գրունտներ, որոնց սեյսմիկ հատկությունն ըստբ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի 2-րդ կարգ է.

- դիմադրությունը $R = 3.5$ կգ/սմ²
- հարթակի գործակիցը $K_0 = 60000$ տ/մ³:

5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Դիտարկվող շրջանը գտնվում է Արարատյան դաշտում՝ Միջին-Արաքսյան ձկվածքում և ներկայացված է հզոր միոցենային նստվածքներով:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի (տես՝ նկ. 2), նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 1-ին գոտում, որտեղ արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.3g$ և ունի 8-9 բալ սեյսմիկայնություն:



Նկար 2. Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

5.3 Բուսական և կենդանական աշխարհ

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին, որին բնորոշ են կիսաանապատային և անապատային բուսածածկույթը և հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Որպես կանոն այս տեսակները տարածված են ոչ ադակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա և ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային և հալոֆիլանապատային տիպերով:

Տարածաշրջանում գրանցված բուսատեսակներից դոմինանտ են հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սովորական նետախոտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախոտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*),

խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջանի (*Lactuca takhtadzhianii*), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բունգեի (*Allochrusa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera*), օջան Թամամջանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառուեզ (*Spinacia tetrandra*), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արարատյան (*Tritium araraticum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (*Tetradiclis tanella*) և այլն:

Կենդանական աշխարհ: Արմավիրի մարզի տարածքում տարածված են ցածր բարձրության (մինչև 1000մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սիստորագորտը, կանաչ դողոջը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Սակայն այստեղ հանդիպում են նաև արտագոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ: Մարզի տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L.(կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Արմավիրի մարզի տարածքում հանդիպում են ՀՀ բուսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- Մեհելիի պայտաքիթ չղջիկ (*Rhinolophus mehelyi* Matschie) - տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable 114e» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ B1a+2ab(iii):
- Գանգրափետուր հավալուսն (*Pelecanus crispus* Bruch) - հազվագյուտ, կրճատվող թվաքանակով տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2ce+3ce+4ce» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:
- Սպիտակաճակատ սագ (*Anser albifrons* (Scopoli, 1769)) - չվող, բնադրող, ձմեռող, քիչ տարածված, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր

ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

- Խոզանավուշ բարալիկ (լատ.՝ Cousinia tenella), բարդածաղկավորների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս:
- **Մատուտակ խոզանավոր (Glycyrrhiza echinata) - լոբազգիների ընտանիքին պատկանող ծածկասերմ բույս: Գրանցված է բույսերի Կարմիր գրքում:**
- Կալախոտ կասպիական (Kalidium caspicum (L.) Ungern-Sternb.) - վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աղուտների շարունակվող յուրացման հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:
- **Երկարատուն սցինկ (Eumeces schneideri) - սցինկների ընտանիքին պատկանող երկարատուն սցինկների ցեղի մոդես է, որը բնակվում է չորասեր թփուտային բուսականությամբ, քարքարոտ նախալեռնային ու լեռնային վայրերում:**

Ծրագրի իրականացման բուն տարածքը տեղակայված է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի 1/2 հասցեում: Տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, ինչը փաստում է, որ նախատեսվող գործունեության տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը: Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով: Տարածքը զուրկ է բուսականությունից՝ բացառությամբ տեղ-տեղ ինքնաբերաբար աճող ոչ արժեքավոր բուսականությունից:

Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել ք. Էջմիածին, Սուրբ Մ. Մաշտոցի 1/2 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի, պատկանում է «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ին:

5.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արմավիրի մարզի ք. Էջմիածին, Սուրբ Մ. Մաշտոցի 1/2 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում:

Գործունեության տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքներում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից մարզում է գտնվում «Որդան կարմիր» պետական արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը: Այն կազմավորվել է 1987թ., ՀՀ Արմավիրի մարզում ունի 219.85 հա տարածք և չունի որևէ առնչություն նախատեսվող գործունեության տարածքի հետ, քանի որ տեղակայված է Արարատյան դաշտում Արգավանդ, Արագափ և Ալաշկերտ գյուղերի միջև, ծովի մակարդակից 900-950 մ բարձրություններում: Արգելավայրի

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի [N 967-Ն](#) որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են

երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները: Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են նաև պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները, ինչը երևում է նաև «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության [385-ն որոշումից](#) (15 մարտ, 2007 թ.), որում Արմավիր մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված հուշարձանները որևէ առնչություն չունեն նախատեսվող գործունեության տարածքի հետ:

5.5 Տարածքի բարեկարգում և կանաչապատում

Նախատեսվող գործունեության տարածքը հանդիսանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցմամբ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ին պատկանող հողատարածք, որի համար առկա է Վաղարշապատի համայնքապետարանը կողմից 25.09.2023թ. տրված N CPP0-0000-8722 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 2](#)-ում):

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման ենթակա տարածքի մակերեսը կազմում է 630 ք.մ.:

Ուսումնասիրելով տեղանքի բնակլիմայական պայմանները, կանաչապատման համար ընտրվել են հետևյալ բուսատեսակները.

- թխկի մանրատերև "Կորալիում" - 1 հատ
- թխկի սրատերև - 5 հատ
- թխկի կարմիր - 2 հատ
- ձիակասկ սովորական - 3 հատ
- հուդայածառ կանադական - 3 հատ
- թույա լեյլանդի "պոն պոն" - 4 հատ
- գիհի հորիզոնական "Օլդ գոլդ" - 8 հատ
- գիհի հորիզոնական - 15 հատ
- գիհի կազակական - 10 հատ
- նարդոս - 198 հատ
- մագնոլիա սուլանժի - 2 հատ
- եղևնի կապույտ - 1 հատ
- սոճի բոնսայ - 1 հատ
- սոճի մուգո - 6 հատ
- սոճի մուգո "մուգուս" - 8 հատ:

Տարածքում նախատեսվում է անցկացնել կաթիլային և ցնցուղային համակարգով համակցված ոռոգման համակարգ՝ 0⁰-360⁰ ցողիչներով (ռոտոր): Ոռոգման ջրաղբյուր է հանդիսանում Էջմիածնի քաղաքապետարանի իրավասության տակ գտնվող տարածքի ոռոգման ցանցը, որին միանալու վերաբերյալ կա ձեռք բերված համաձայնություն: Կանաչապատ տարածքի հետագա խնամքն իրականացվելու է «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից:

Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն գործունեության տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով Վաղարշապատի համայնքապետարանի հետ:

Կանաչապատումը կիրականացվի համաձայն կանաչապատման հատակագծի և սխեմայի, որը համաձայնեցվել է Վաղարշապատի համայնքապետարանի հետ:

Կանաչապատման համար կիրառվել են այնպիսի բուսատեսակներ, որոնք իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները՝ միաժամանակ համապատասխանելով ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին:

5.6 Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբաթական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման համաձայն:

Ուսումնասիրվող տարածքում «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տեղադրված մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումների համար նախատեսված հիմնական անշարժ և շաբաթական կայաններ տեղադրված չեն, ուստի Էջմիածին քաղաքում օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 7. Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը բնակչության քանակից

Բնակչության քանակը, հազ.	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 - 125	0.4	0.05	0.03	1.5
10 - 50	0.3	0.05	0.015	0.8
< 10	0.2	0.02	0.008	0.4

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է էջմիածին քաղաքում, որտեղ բնակչության թվաքանակը ավելի է, քան 50 հազ., ապա տվյալ տարածքի համար կարելի է դիտարկել հետևյալ ցուցանիշները. փոշի՝ 0,4 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,03 մգ/մ³ և ածխածնի օքսիդ 1.5 մգ/մ³:

Նախատեսվող գործունեության արդյունքում օդային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

5.7 Ջրային ռեսուրսներ

Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատյան ջրավազանում, որտեղ առկա են հետևյալ ջրերի տիպերը՝ աղբյուրի, գրունտային և ճնշումային: Աղբյուրի ջրերի կոլեկտորներ են հանդիսանում ձեղքավորված աղեգիտաբազալտները: Ստորերկրյա ջրերի տարածման շրջանում ընդգրկված է Մեծամոր գետի ավազանը, Հրազդան գետի ներքնի հոսանքը և Քուռ-Արաքսի մերձափյա գոտին: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճագետային գոյացություններին և ճաքճքված անղեգիտա-բազալտներին, որոնց սնուցումն իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք):

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50հա մակերես, ունի 2մ խորություն, ձագարածն ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն (Սևջուր) է, որը սկիզբ է առնում Այդր լճից:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլեկտրաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է ջրավազանային կառավարման 6 տարածք-

ների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:


Գործունեության տարածքը պատկանում է Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքին: Համաձայն ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից [2022թ. համար հրապարակված մակերևութային ջրերի որակի վերաբերյալ տարեկան ամփոփագրի](#) տվյալների, Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում՝ «անբավարար» (4-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով, մանգանով, կախության չոր նյութերով, Ռանչպար գյուղից ներքև՝ նիտրիտ իոնով և բորով: Նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

5.8 Հողեր

Համաձայն ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների, հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: 2023 թվականի 1-ին եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումներ կատարվել են Մեծամոր, Արմավիր, Կապան, Քաջարան, Մեղրի և Ագարակ քաղաքներում: Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արմավիրի մարզում, ստորև ներկայացվում են մարզի 2 քաղաքների՝ Մեծամոր և Արմավիր քաղաքների հողերում մետաղների կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ [«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների](#):

Աղյուսակ 8. Մեծամոր և Արմավիր քաղաքների հողերում մետաղների կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվություն

Բնակավայր	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
<i>Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ</i>							
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4



Նկար 3. Մետաղների պարունակությունը ՀՀ որոշ քաղաքների հողային ծածկույթում

Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ծածկույթի լրացուցիչ աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազմանը/կանխմանը:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Սոցիալական գործոններ, ժողովրդագրական կազմ և բնակչություն

ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 800-850 մետր բարձրության վրա: Քաղաքն ունի գլխավոր ճանապարհի դեպի մայրաքաղաք Երևան: Զվարթնոց օդանավակայանից տեղակայված է 7 կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքը կազմում է 4424,82 հա, որից քաղաքի տարածքը՝ 852.24հա: Քաղաքի տեղանքը հարթ է, թույլ թեքված դեպի հարավ-արևմուտք:

Էջմիածինը Հայաստանի համեմատաբար մեծ քաղաքներից է, բնակչությունը՝ մոտ 57 503 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 48.5%-ը, իսկ կանայք՝ 51.5%: Քաղաքի բնակչության գերակշիռ մասը հայերն են, ազգային փոքրամասնություններից եզդիները կազմում են քաղաքի բնակչության 8.4%-ը:

Համայնքի տարածքում կրթական համակարգը ներառում է նախադպրոցական դաստիարակության, ավագ և հիմնական կրթության, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բնագավառները: Քաղաքում գործում են 12 հանրակրթական դպրոցներ, որոնցից 3-ը՝ ավագ, իսկ 9-ը՝ հիմնական դպրոցներն են: Առկա է 1 հատուկ դպրոց, «Էօնեկեան» հանրակրթական միջնակարգ դպրոց, Ռադիո դպրոց, գործում են 8 մանկապարտեզներ, 1 մարզադպրոց, 2 երաժշտական դպրոցներ, գեղարվեստի դպրոց, 5 թանգարաններ, 2 մշակույթի տներ, «Հ. Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը՝ իր 7 տեղամասերով, Վ. Համազասպյանի անվան պետական քուլեջը և Գրիգոր Լուսավորիչ համալսարանը: Էջմիածնի Մայր Աթոռին կից գործում է Գևորգյան ճեմարանը: Համայնքի առողջապահության ոլորտում գործում են առողջապահական 4 հիմնարկներ, որոնք գտնվում են պետական ենթակայության ներքո: Դրանք են՝ մեկ հիվանդանոց, որն իր մեջ ներառում է «Շտապ օգնություն» ծառայությունը, մեկ ծննդատուն, մեկ պոլիկլինիկա, որն իր մեջ ներառում է «Մաշկավեներական դիսպանսեր» ու «Տուբ դիսպանսեր» և հիգիենիկ հակահամաճարակային պետական ձեռնարկություններ:

Քաղաքը նախկինում համարվել է խոշոր արդյունաբերական կենտրոն՝ իր տարածքում ունենալով ժամանակակից տեխնիկայով ու սարքավորումներով հագեցված այնպիսի հզոր գործարաններ, ինչպիսիք են «Ռաստր», «Էլեկտրոն», Կարի և «Սարքաշինական» գործարանները, որոնք գործել են միութենական ռազմաարդյունաբերության համալիրի կազմում և թողարկել գերճշգրիտ սարքեր: Ներկայում արդյունաբերական ձեռնարկությունները տնտեսական կապերի խզման, ինչպես նաև ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կամ չեն աշխատում, կամ էլ գործում են իրենց հզորության 5-10%-ի չափով: Փոքր և միջին ձեռնարկությունները կարևորագույն դեր ունեն Էջմիածնի տնտեսության զարգացման համար: Քաղաքում փոքր և միջին ձեռնարկությունները զարգանում են երեք հիմնական ուղղություններով՝ առևտուր, սպասարկում և փոքր արտադրություններ: Նախորդ տարիների համեմատ ընդլայնվել է հատկապես առևտրի ոլորտը: Ներկայումս այդ ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունները կատարում են կարևոր դեր՝ զբաղեցնելով մանրածախ շուկայի 85-90%-ը:

Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի 1/2 հասցեում նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական սոցիալական ազդեցություններ հիմնականում կապված.

- տվյալ տարածքի բնակելի և հասարակական պայմանների բարելավմամբ,
- նոր կինոդահլիճների առակայությամբ,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործմամբ և պահպանությամբ:

Ներկայացված բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով իրականացվող շինություն, որի ճարտարապետական լուծումները բավականին հետաքրքիր տեսք են տալիս բնակելի համալիրին՝ միաժամանակ պահպանելով նախկին կինոյի շենքի կոլորիտն ու ճարտարապետությունը:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա Էջմիածին քաղաքի բնակիչներին իրենց բնակությունն ու ժամանցն անցկացնել բարեկարգ, նորաճ և հաճելի միջավայրում:

6.2. Բնապահպանական ազդեցություններ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

✓ Օդի աղտոտում

Օրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել ակտիվային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.2

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Շինարարության ընթացքում հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 4 ամիս, իսկ ընդհանուր շինարարության ժամանակահատվածի համար կլինի՝ 4 ամիս x 22 օր x 8 ժամ = 704 ժամ/շին:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G=9900\text{մ}^3 : 704 = 14.06 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $14.06 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.7 \text{ տ}/\text{մ}^3 = 23.9 \text{ տ}/\text{ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.2 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 23.9 \times 10^6 / 3600 = 0.19 \text{ գ}/\text{վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները շինարարական յուրաքանչյուր փուլում իրականացվող հողային աշխատանքների ժամանակ կկազմեն՝

$$0.19 \text{ գ}/\text{վ} \times 704 \text{ ժ}/2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.48 \text{ տ}/\text{շին}.$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների փուլային իրականացումը և դրանց ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.1 միջոցառումներ), մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափեխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և էլակետային սովյալների հետ:

✓ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում (տես՝ ԲԿՊ, 5.2 միջոցառումներ) շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը կանխատեսվում է, որ աշխատատեղերում և մոտակա բնակելի տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ՝ երեք ամիսը մեկ պարբերականությամբ (տես՝ բաժին 7), որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի հետ: Բողոքների առկայության դեպքում կկատարվեն նաև լրացուցիչ չափումներ և, ըստ անհրաժեշտության, կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

✓ **Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների

իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկված են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրն օգտագործվի միայն փոշենստեցման նպատակով,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:

✓ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա բնակելի համալիրի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությանը սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն:

✓ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջափտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցություններ հիմնականում կապված.

- տվյալ տարածքի բնակելի և հասարակական պայմանների բարելավմամբ,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործմամբ և պահպանությամբ:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա համալիրի ապագա բնակիչներին իրենց բնակությունն ու ժամանցն անցկացնել առավել բարեկարգ և հաճելի միջավայրում:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է [հավելված 8](#)-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիթորինգ ([հավելված 9](#)), որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի (ներառյալ՝ մշտադիտարկումները) գումարային գնահատումը մոտ 14 մլն. ՀՀ դրամ է:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NO_x) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- **Շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, որի պարբերականությունը կորոշվի կախված կիրառվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցի տեսակից և շահագործման աշխատաժամանակից:**
- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:

Մշտադիտարկումների համար շինարարության ողջ ընթացքում նախատեսվում է հատկացնել 1 760 000 դրամ:

Աղյուսակ 9. Մշտադիտարկումների ժամանակացույց

Մշտադիտարկումներ, շին. փուլ/դրամ		
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NO _x) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ	28 ամիս x 50000 դրամ	1 400 000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երկու ամիսը մեկ հաճախականությամբ	9 ամիս x 40000 դրամ	360 000
Ընդամենը (ողջ շին. ընթացքում)		1 760 000

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ևս ներկայացված են ԲԿՊ-ում:

8. ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական հնարավոր արտակարգ իրավիճակներն են հրդեհների առաջացումը, հեղուկ նյութերի արտահոսքը, վթարները՝ կապված տեխնիկայի շահագործման հետ, աշխատողների վնասվածքները, ինչպես նաև անբարենպաստ օդերևութաբանական պայմանները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկսելը աշխատողների հրահանգավորում ըստ նրանց կողմից իրականացվող աշխատանքի անվտանգության կանոնների:
- Հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում հրշեջ հիդրանտների տեղադրում:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակի և տրանսպորտային միջոցների ապահովում հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին բուժօգնության միջոցներով, աշխատողների հրահանգավորում դրանց ճիշտ օգտագործման և առաջին բուժօգնության ցուցաբերմանն վերաբերյալ:
- Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է.
 - մշտապես իրականացնել շին. հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - շինարարական աշխատանքների տեղամասերում պետք է տեղադրվեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Օգտագործումից առաջ հեղուկ/սորուն նյութերի տեղափոխում շինարարական հարթակ և դրանց պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը կանխելու/բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին ապահովում անհատական պաշտպանական միջոցներով (ԱՊՄ): Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին առաջին բուժօգնության ցուցաբերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում բժշկական հաստատություն:

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Նորմատիվ ակտերով թեև անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հստակ չափորոշիչները բացակայում են, սակայն դրանց շարքին են դասվում քամու արագության մեծացումը, անհողմությունը, չոր եղանակը, թանձր մառախուղը:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների մասին որոշում կայացնելու դեպքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- տեխնոլոգիական գործընթացների վերահսկողության խստացում,
- փոշու տարածումը կանխող միջոցառումների ավելացում,
- անհրաժեշտության դեպքում՝ շինարարական աշխատանքների դադարեցում:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները, օրենսդրությամբ սահմանված կարգով, կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և բնակելի համալիրի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշտած կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:	<p>3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ):</p> <p>3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն):</p> <p>3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:</p> <p>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):</p> <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության</p>	Կապալառու

		<p>հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p>	
Հանրության հետ կապ և հանրային իրազեկում			
<p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>4.2. Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ Կապալառու</p>
Շրջակա միջավայրի պահպանություն			
<p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p>	<p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</p> <p>2. Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակար-դակի աճի հետևանքով ազդեցությունը:</p>	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;</p> <p>5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p>5.1.6. Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացումը:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանակացույցի:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սամանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում:</p> <p>5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:</p>	<p>Կապալառու</p>

Շինարարական հրապարակի կազմակերպում			
6. Շինհրապարակի կազմակերպում	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ	<p>6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>6.2. Շին. հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>6.3. Անհրաժեշտ է նախատեսել ավազի, ցեմենտի, այլ ստրուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորումը փակ տարածքներում կամ դրանց ծածկումն անթափանց թաղանթներով:</p> <p>6.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>6.5. Անհրաժեշտ է իրականացնել շենք ծածկումը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:</p> <p>6.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագուշացնող նշաններ:</p> <p>6.7. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում:</p>	Կապալառու
Երթևեկության կառավարում			
7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	<p>Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • երթևեկության խափանումներ • երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնաս 	<p>7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելիքային և յուղի արտահոսքը կանխելու համար:</p> <p>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:</p>	Կապալառու

Արտակարգ իրավիճակների կառավարում			
<p>8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p>	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>8.6. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրների մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանամատյանում:</p>	<p>Կապալառու</p>
Թափոնների և նյութերի կառավարում			
<p>9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում</p>	<p>9.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>9.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև</p>	<p>Կապալառու</p>

	<p>շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p>	<p>կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;</p> <p>9.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին. աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>9.4. Շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր՝ հատուկ սահմանված երթուղով:</p> <p>9.5. Շինարարական հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն:</p> <p>9.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p>	
Աշխատողների վերապատրաստում			
<p>10. Աշխատողների վերապատրաստում</p>	<p>Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:</p>	<p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ;</p>	<p>«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, Կապալառու</p>
Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում			
<p>11. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում</p> <p>12. Կանաչապատում</p>	<p>Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը , թափոնները և այլն:</p>	<p>12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>12.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:</p> <p>12.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Վաղարշապատի համայնքապետարանի հետ:</p>	<p>Կապալառու</p>
Հ Ե Տ Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Վ Ա Ն Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն Փ ՈՒ Լ			
<p>13. Թերությունների վերացման աշխատանքներ</p>	<p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p>	<p>13.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճած իրականացումը:</p>	<p>Կապալառու</p>

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Վայր/ Գործողություն / Փուլ	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուններ	Մոնիտորինգի հաճախականություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Հանրային լուսամետրեր և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղեկացվածությունն ԲԱՄ-ի վերաբերյալ	Չին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - տուգայցեր շին տեղամասեր, - հանրային լուսամետրեր, - բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, Կապալառու	Հանրային լուսամետրեր՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը
2. Շրջակա միջավայրի պահպանություն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	Չին. հրապարակ	- ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
5. Թափոնների և շին. նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը	Չին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակ-	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ,	

	շինարարության ընթացքում			ները կառավարվում են Պլանին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	Կապալառու	
6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N87 արձանագրություն պահանջների: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, Կապալառու	
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
7. Թերությունների վերացման աշխատանքներ	- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	բնակելի համալիրի տարածքի սահմաններում	Չափումներ	Աղմուկի և թրթռումների, հողի և օդի որակի չափագրումներ՝ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, Կապալառու	
8. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ	

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 1

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածին, Ս. Մեսրոպ Մաշտոցի փողոց 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի

կառուցման վերաբերյալ

(1-ին հանրային քննարկում)

ք. Էջմիածին

23.02.2024թ.

2024թ. փետրվարի 23-ին ժամը 11:00-ին Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Մ. Եկմայանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի շենքում (հասցե՝ ք. Էջմիածին, Կոմիտասի հրապարակ, 0 շենք), տեղի ունեցավ Ս. Մեսրոպ Մաշտոցի փողոց 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար, ինչպես նաև տեղադրված է եղել Վաղարշապատի համայնքապետարան պաշտոնական կայքում, իսկ շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել մինչ փետրվարի 22-ը ներառյալ իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել նաև Վաղարշապատի համայնքապետարան, ինչպես նաև նախօրոք գրանցվել հանրային քննարկումներին մասնակցելու համար:

Հանրային քննարկմանը մասնակցել են պատվիրատու ընկերության («ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ), նախագծային («Միդիա» ՍՊԸ) և ՇՄԱԳ իրականացվող («ԳրինԹայմ» ՍՊԸ) կազմակերպությունների, Վաղարշապատի համայնքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև Էջմիածին համայնքի բնակիչներ (ընդհանուր 24 մասնակից):

Նախագծի ներկայացում և քննարկում

Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը: Նա նշեց, որ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ նախաձեռնությամբ մշակվել է «Էջմիածին քաղաքի Ս. Մեսրոպ Մաշտոցի փողոց 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագիծը», որը ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա է բնապահպանական փորձաքննության: Այնուհետև նախագծի մանրամասները և բնապահպանական հարցերը ներկայանելու նպատակով նա խոսքը փոխանցեց բնապահպանության մասնագետ Քրիստինե Սահակյանին:

Ք. Սահակյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանրային քննարկման նպատակը: Նա նշեց, որ նախագիծը մշակվել է ճարտարապետահասակագծային առաջարկների պահանջների, ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ինչպես նաև Պատվիրատուի պահանջների համաձայն: Նախագծային լուծումների համաձայն բնակելի համալիրի տարածքի ընդհանուր կառուցապատման մակերեսը գերազանցում է 1500մ² և ՀՀ օրենսդրության համաձայն այն ենթակա է բնապահպանական փորձաքննության: Ք.Սահակյանը հավելեց, որ շրջակա միջավայրի փորձաքննական գործընթացի շրջանակներում առաջին հանրային լուծում է և դեռևս նախատեսվում է ունենալ և մեկ նման հանդիպում:

Նա մանրամասնեց, որ նոր բնակելի համալիրի նախագծում իրականացվել է մանրակրկիտ ուսումնասիրելով գոյություն ունեցող կինոթատրոնի շենքի պատմությունը, դրա ճարտարապետ-

տական առանձնահատկություններն ու կառուցվածքը: Նախկին կինոթատրոնի շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատումն իրականացվել է «ՎԱԼԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից:

Իրականացված ուսումնասիրությունների համաձայն շենքի ֆիզիկական մաշվածությունը կազմել է 48%, ինչը նշանակում է, որ շենքի տեխնիկական վիճակը դասվում է 3-րդ աստիճանի (անբավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել հին կինոշենքի տեղում՝ պահպանելով ճակատային մասի կամարածև հատվածը: Սա նուրբ նախագիծ է և նոր բնակելի համալիրը կհամատեղի ժամանակակից տեխնոլոգիական լուծումներն ու հարմարավետությունը ավանդական ճարտարապետական տարրերի հետ:

Գոյություն ունեցող նախկին կինոթատրոնի շենքի քանդումն իրականացվել է համաձայն քանդման թույլտվության՝ տրված էջմիածին քաղաքապետարանի կողմից 2023թ. հուլիս ամսին: Սակայն պահպանվել է ճակատային կամարածև հատվածը՝ շուրջ 330մ² մակերեսով, որը կմիացվի նորակառուց կցակառուցյին, թույլ տալով որ քաղաքի բնակիչները կրկին վայելեն նախկին կինոթատրոնի մթնոլորտը: Դա հաշվի առնելով կառուցում նախատեսվում է ունենալ 2 կինոդահլիճներ՝ ընդհանուր առմամբ 100 նստատեղով:

Բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրը բաղկացած է լինելու 2 ստորգետնյա և 10 վերգետնյա հարկերից, որը շինության առավելագույն հարկայնությունն է լինելու: Ստորգետնյա հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղիներ՝ ընդհանուր առմամբ 64 մեքենայի համար:

Նա նշեց, որ բնակելի համալիրի առաջին հարկում հիմնականում տեղեկյալված են լինելու հասարակական նշանակության տարածքները, որոնք իրականացված են բնակելի տարածքներից առանձնացված մուտքերով՝ հարմարեցված բնակչության սակավաշարժ և հաշվանդամ խմբերի ազատ տեղաշարժին: Մնացած հարկերը լինելու են բնակելի՝ ընդհանուր 100 բնակարաններով, որոնք կունենան 52-97 մ² մակերեսներ: Տարածքի հետ կապված ինժեներային ենթակառուցվածքները առկա են, ձեռք են բերված համապատասխան տեխնիկական պայմանները և իրականացված են նախագծային լուծումները. ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում: Ջրամատակարարումը կիրականացվի 400մմ տրամագծի խողովակով Անդրանիկի փողոցով անցնող ջրատարից, իսկ կոյուղին նախատեսվում է միացնել տարածքի հարևանությամբ անցնող կոյուղատարին՝ 400մմ տրամագծի խողովակով, գազամատակարարումը կիրականացվի համաձայն Գազպրոմ Արմենիա ընկերության տեխ. պայմանի, այսինքն շենքում լինելու է անհատական ջեռուցում: Նույնը նաև կապված էլեկտրամատակարարման հետ՝ ՀԷՑ-ից ձեռք բերված տեխ. պայմանի համաձայն:

Այնուհետև Ք.Սահակյանը անդրադարձավ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունների մանրամասներին: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները: Նա նշեց, որ բնապահպանական կառավարման պլանը լինելու է շինարարության կապալառուի պայամանագրի մի մաս, որում ամփոփված միջոցառումների կատարումը Կալառուի համար լինելու են պարտադիր:

Նշվեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա, քանի որ գործունեությունն իրականացվելու է քաղաքային ակտիվ միջավայրում, որն արդեն ուրբանացված տարածք է:

Որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, աղմուկ, շինարարական և կենցաղային աղբ, երթևեկության կառավարում և այլն), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի: Նա նաև հավելեց, որ գործելու է բողարկման ճկուն համակարգ, որի շրջանակներում ցանկացած ժամանակ, եթե բնակիչները կունենան առաջարկություններ, բողոքներ, դիտողություններ, նրանք կարող են դիմել ինչպես կառուցապատողին, այնպես էլ համայնքապետարանին, քանի որ ապահովվելու է նախաձեռնող-կառուցապատող-համայնքապետարան համագործակցության շղթան:

Ք. Սահակյանի կողմից կարևորվեց, որ բոլոր լուծումներն ու հարցերը մանրամասն քննարկվել են համայնքապետարանի հետ, քանի որ նախատեսվող շինությունը տեղակայված է լինելու քաղաքի կենտրոնական մասում, կարելի է ասել քաղաքի սրտում: Նա նաև նշեց, որ նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի 630մ²:

Ամփոփելով իր ելույթը Ք.Սահակյանը նշեց, որ ներկայացված բնակելի համալիրն՝ իր ճարտարապետական լուծումներով, հնարավորություն կտա թաղամասի ապագա բնակիչներին իրենց բնակությունն ու ժամանցն անցկացնել նորաճ և հաճելի միջավայրում՝ միաժամանակ ունենալով տվյալ տարածքի համար էսթետիկ և շրջակա միջավայրի հարիր լուծումներ:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.


N	Հարց	Պատասխան
1.	Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ Որ խնդրեմ կներկայանաիք նորից, ես ուղղակի չչսեցի:	Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ Ես սկզբում թեև ներկայացել էի, բայց ես մեկ անգամ ներկայանալով: Ես Քրիստինե Սահակյան եմ, պատասխանատու եմ նախագծային լուծումների բնապահպանական մասի համար, այսինքն բնապահպանական բոլոր աշխատանքները, հաշվետվությունները՝ ուղղված համապատասխան եզրակացության ձեռք բերմանը, ինչպես նաև հանրային լուծումները համակարգվում են իմ կողմից:
2.	Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ Մասնագիտությունը, դուք որևէ նախարարությունից եք:	Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ Ես մասնագիտությամբ բնապահպան եմ, և ոչ, որևէ նախարարությունից չեմ: Շրջակա միջավայրի նախարարությունից մենք ներկայացուցիչ կունենանք երկրորդ հանրային լսման ժամանակ:
3.	Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ Դուք որտեղ եք աշխատում, ես ուզում էի իմանալ դուք իրավասու եք, որ այսօր ներկայացնում եք:	Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ Տվյալ պարագայում ես հանդիսանում եմ բնապահպանության մասնագետ, իսկ եթե զուտ թե որտեղ եմ աշխատում, ապա ասեմ, որ աշխատում եմ Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում՝ գեոէկոլոգիայի ամբիոնում, այսինքն ես տվյալ ոլորտի մասնագետ եմ և իրավասու եմ, քանի որ բնապահպանական բոլոր աշխատանքներն իրականացվել են իմ կողմից: Գործընթացային առումով ասեմ, որ իրականացված աշխատանքների արդյունքում համապատասխան հաշվետվություն է կազմվում, որը ներկայացվում է շրջակա միջավայրի նախարարություն: Ամփոփ փաթեթը ուսումնասիրելուց հետո նախարարությունն անելու է երկրորդ հանրային լսումը, որի պատասխանատուն շրջակա միջավայրի նախարարությունն է և նոր դրանից հետո եզրակացություն տրամադրելու գործընթացն է լինելու:

4.	Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ Այսինքն այսօրվա հանդիպումն ուղղակի զարգաց դնելու համար է:	Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ Ոչ այս հանդիպումն ուղղակի զարգաց դնելու համար չէ: Այն օրենքի պահանջ է, որը պահանջվում է նախաձեռնողից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից:
5.	Էջմիածին քաղաքի բնակիչ Որոշակի հարցեր կան, որոնք բնապահպանական չեն: Օրինակ շենքից շենք հեռավորությունը բավական մոտիկ կլինի 10 հարկի դեպքում: Դա տեխնիկական հարց է, ոչ թե բնապահպանական:	Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ Փորձեմ ավելի համապարփակ ինֆորմացիա տալ: Նախագիծը բնապահպանական փորձաքննությունից զատ նաև անցելու է համալիր փորձաքննություն, որի ժամանակ ուսումնասիրվում է նախագծի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության շինարարական բոլոր նորմերին, որն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ համապատասխան հանձնաժողովի ձևավորմամբ: Եթե որևէ նախագծային սխալ լուծում լինի, հնարավոր չի որ նախագիծը ստանա համալիր փորձաքննության դրական եզրակացություն:
	Էջմիածին քաղաքի բնակիչ Այսօրվա դրությամբ Էջմիածնում շարժը շատ բարդ է, հատկապես կոնտրոնական փողոցներում: Այստեղ էլ լիքը մեքենաներ կլինեն:	Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ Ձեր բարձրացրած հարցը արդիական է, ոչ միայն Էջմիածին, այլ նաև Երևանի համար, որն անհամանետ ավելի մեծ քաղաք է, քան Էջմիածինը, բայց նախագծային լուծումներում հնարավորինս այդ ամենը հաշվի է առնված մուտքը, ելքերը և այլն: Ինքը կենտրոն հատված է և այսպես, թե այնպես տվյալ տարածքում այդ աշխուժությունը կա, բայց այդ ամենը հնարավորինս հաշվի է առնված: <u>Նախագծի գլխավոր ճարտարապետ Աշոտ Հարությունյանը հավելեց.</u> Հարգելի քաղաքացիներ, եթե հիշում եք մենք նախկինում էի հանդիպում ունեցել եք և մի անգամ արդեն քննարկվել է այս նախագիծը: Չնայած այսօր բնապահպանական հարցերով եք հավաքվել, սակայն ուզում եմ մի երկու բան ասել: Նախկին քննարկումներից հետո նախագծում շատ բան փոխվել է, հաշվի են առնվել ձեր բարձրացրած հարցերը, օրինակ այն որ դուք դեմ էիք, որ շենքի մուտքը լինի ձեր շենքի դիմացից: Մենք այն փոխել ենք, մուտքերը, ելքերը տրանսպորտային մոտեցումներն այսպես ենք արել, որ ձեր շենքի բակի միջով մեքենա չանցնի: Ես սա բարձրաձայնում եմ նրա համար, որ մեր անցած քննարկումները ապարդյուն չէին: Ես էլ որպես ճարտարապետ վատ բան չեմ անում, քանի որ ճարտարապետը պիտի ստեղծի միջավայր, որը ինչքան լավը լինի, հասրակությունն այնքան առողջ ու լավ է լինելու: Այն ինչ մենք հիմա ունենք տվյալ տարածքում, դա առողջ միջավայր չէ: Բոլորը դա գիտեք, թե ինչ պայմաններ են այնտեղ, ինչ հասրակություն էր այդտեղ, ուլքեր էին մտնում այնտեղ ու ինչ ասես անում էին: Կինոթատրոնի գաղափարը պահում ենք ու ուզում ենք, որ լավ բան ստացվի: Ինչ վերաբերում է նորմերին, քաղաքաշինական կոմիտեով այս բոլորն անցնելու է: հեռավորությունները, սեյսմիկ նորմերը, նախագծային լուծումները և այնպես է, որ էլի եք հանդիպելու: Ես էլ եմ այս քաղաքից, այստեղ ապրում եմ ու այստեղից չեմ գնալու հաստատ ու ամեն օր ձեզ բարև եմ տալու:
	Էջմիածին քաղաքի բնակիչ Ես շինարարությանը դեմ չեմ, պարզապես կան հարցեր, որոնք այսօր շատ դժվար է լուծել: Դա ընդհանուր խնդիր է մեզ մոտ:	Աշոտ Հարությունյան, նախագծի գլխավոր ճարտարապետ Տրանսպորտի հարցը հիմա բավականին լուրջ է և ոչ մի օրենսդրական մեխանիզմ չկա դեռևս, որ այդ հարցը լուծի: <u>Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը հավելեց.</u> Հիմա բոլոր շենքերում պարտադիր պահանջ է, որպեսզի լինեն

	ստորգետնյա ավտոկայանատեղիներ, ինչը նաև տվյալ նախագծում է հաշվի առնված. 64 մեքենայի համար նախատեսված երկհարկ ավտոկայանատեղի է նախատեսված:
<i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i> Ճարտարապետական առաջադրանքը հիմա ինչ փուլում է:	<i>Ք.Սահակյան, քննապահպանության մասնագետ</i> Վերջնական նախագիծն արդեն պատրաստ է: <i>Նախագծի գլխավոր ճարտարապետ Աշոտ Հարությունյանը հավելեց.</i> Եթե նկատի ունեք ճարտարապետահատակագծային առաջադրանքը, ապա այն վաղուց տրված է:
<i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i> Իսկ շին. թույլտվությունը:	<i>Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը հավելեց.</i> Շին. թույլտվությունը հիմա չի կարող լինել, այն լինում է այն ժամանակ, երբ նախաձեռնողը արդեն ձեռք է բերած լինում երկու փորաքննությունների դրական եզրակացությունները՝ և բնապահպանականը և համալիրը: Սրանք դեռևս գործընթացի մեջ են և մինչև երկուսի դրական եզրակացությունները չլինի նախաձեռնողը չի կարող ստանալ շինարարության թույլտվություն:
<i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i> Երկրորդ հանրային լսումն ինչն է վերաբերելու:	<i>Ք.Սահակյան, քննապահպանության մասնագետ</i> Երկրորդ հանրային լսումը ևս բնապահպանական է՝ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ, որը կարծում եմ կլինի ոչ շուտ. քան 1.5 հետո, եթե ոչ ավելին:
<i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i> Գիտե՞ք ինձ ինչ է հետաքրքրում, ինչ որ մի հաշվետվություն կա:	<i>Ք.Սահակյան, քննապահպանության մասնագետ</i> Եթե բնապահպանականի մասին է խոսքը, ապա այդ կա առանձին հաշվետվություն, որը կոչվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, որը տրվում է նաև համայնապետարանին, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարությունը այն տեղադրում է իր պաշտոական կայքում, որը բաց է բոլորի համար:
<i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i> Հիմա չունեք այդ հաշվետվությունը: Ինչն էք մանրամասն ուսումնասիրել, օրինակ հաշվետվության մեջ քամու հաշվարկ արել եք, թե ոչ:	<i>Ք.Սահակյան, քննապահպանության մասնագետ</i> Այս պահին ամբողջ հաշվետվությունը ձեռքս տակ չունեմ, բայց եթե տաք ձեր էլեկտրոնային հասցեն, այն հենց այսօր կարող եմ ուղարկել ձեզ, կամ դուք կարող եք այն վերցնել համայնապետարանից: Ում հետաքրքիր է թե նախագծային լուծումների հետ կապված մանրամասները, թե բնապահպանական ցանկացած ժամանակ կարող են դիմել ինձ, նախաձեռնողին կամ գալ նախաձեռնողի գրասենյակ՝ մանրամասն լուծումներին ծանոթանալու համար: Քամու հաշվարկը մենք չենք անում, այդ տվյալները վերցվում է շինարարական կլիմայաբանության նորմերից: Ինչ վերաբերում է բնապահպանական մասին, ապա դրա շրջանակներում մենք դիտարկել են այն բոլոր ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են երկրաբանությանը, հիդրոերկրաբանությանը, սեյսմիկ անվտանգությանը, գրունտների շերտերին, ստորերկրյա ջրերի մակարդակին, տվյալ տարածքի բնակլիմայական պայմաններին, նրանց համապատասխանությանը նախագծային լուծումներին, որովհետև դրանց հիման վրա են նաև իրականացվում շենքի ջեռուցման, օդափոխության, էներգաարդյունավետության լուծումները: Բացի այդ հաշվի է առնվել շինարարության փուլում հնարավոր բնապահպանական ազդեցությունները, որոնց մասին արդեն ասել եմ:
<i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i> Իսկ ինստուցիան:	<i>Ք.Սահակյան, քննապահպանության մասնագետ</i> Ինստուցիան բնապահպանական հարց չէ, այն արվում է համապատասխան հաշվարկների հիման վրա և պետք է համապատասխանի համապատասխան նորմերին: Այդ հաշվարկները բնապահանար չի անում, այլ նախագծողի

	համապատասխան մասնագետը:
<i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i> Ես հաշվել եմ, մենք 10 հարկի դեպքում ինստուցիա չենք կարողանում ապահովել:	<i>Ք.Սահակյան, քննապահպանության մասնագետ</i> Դա տեխնիկական հարց է, եթե դուք ունեք հաշվարկներ և փաստաթղթեր, ապա խնդրում եմ ձեր հաշվարկներով հանդերձ մոտենալ մեր ճարտարապետներին և համապատասխան հաշվարկ անողներին, համեմատեք այն և հիմնավորեք: Եթե ունեք բոլորը, եթե ձեր հաշվարկները հիմնավորված են, ապա դրանք ներկայացրեք և ձեզ կպատասխանեն: Խնդրում եմ անհիմն որևէ հարց քթադրացնել: <i>Սկսվեց որոշակի բանավեճ ներկաների միջև կապված նրա թե, արդյոք տվյալ բնակիչը ընդհանրապես կարող է նման ինստուցիոն հաշվարկներ իրականացնել, թե ոչ և եթե նման հաշվարկներ է անում, ապա այդ երբևիցե:</i> Հարց տրվեց նաև, թե նա ինչ մասնագետ է, որին այդպես էլ պատասխան չտրվեց: <i>Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը ևս մեկ անգամ հավելեց, որ.</i> Բոլոր նախագծային լուծումներն իրականացվել են նախագծահատակագծային առաջադրանքի հիման վրա և եթե մանրամասներ են պետք հաշվետվություններից, նախագծային լուծումներից, ապա կարող են տարմադրել էլեկտրոնային հասցե, որին այն կուղարկվի կամ ցանկացած ժամանակ կարելի է դիմել նախաձեռնողին, նախագծողին կամ համայնապետարանին և դրանք ձեզ կտրամադրվեն տեղում: <i>Արթուր Մակարյանը՝ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ը ներկայացուցիչը, հավելեց.</i> Այսօր մենք ճանապարհների հետ կապված խոսում ենք բոլորս լավ իմանալով, որ քաղաքապետարանի դիմաց և նրա կողքերով լիքը տեղեր կան մեքենա կայանելու համար, չնայած այն բանին, որ բնակելի համայնքի համար ավտոկայանատեղի լինելու է, որը մի բան է շատ է: Հաստատ ձեր ջրի խորվակին չի միացվելու, որ մտածեք թե ջուրը կբացան, այլ հակառակը առանցիկ ջուր է բերվում: Շենքն ունենալու է առանձին էլ. ենթակայան, որը վստահ եմ, որ իր հզորությամբ ծառայելու է նաև ձեզ համար: Ինչ վերաբերում է գազին, ապա այն առանձին գծով է բերվելու, ձեզ որևէ նեղություն չի տալու, այլ ընդհակառակը հնարավոր է որ վթարների հետ կապված դուք այդ գծից այլընտրանքային գազ ստանաք: Այսինքն բոլոր առումներով այս ամենն օգուտ է, այլ ոչ թե վնաս: Մուտքերն հակառակ կողմից է և վրա չի սալիս: Այնպես, որ ձեր մտահոգություններն էլ ենք հասկանում ու կփորձենք հնարավորինս քիչ նեղություն ձեզ տալ: Անում եք էսի արևն է փակում, սա այնպես, սա այնպես, քաղ. շինը այդ բոլորը նայում է ու ոչ մի պաշտոնյա հիմար չի, որ սխալ նախագծի տակ ստորագրի: Ու եթե ուզում էլ տվեք ձեր e-mail-ը ու ձեզ բոլոր նյութերը կուղարկվի: <i>Այս ընթացքում մասնակիցներին տրամադրվեցին նախագծի մանրամասների վերաբերյալ հակիրճ տեղեկատվական նյութերը, որոնք մինչ այդ էլ դրված էին սեղանին:</i> <i>Արմեն Մուրադյան, Էջմիածին քաղաքի բնակիչ</i>

	<p>Այստեղ ոչ բոլորի հարց կա, ոչ էլ, ուղղակի քննարկում ենք, թե ինչ խնդիրներ են առաջանում:</p> <p>Օրինակ քանդման ժամանակ ահռելի մեծ փոշի էր դուրս գալիս, տեսք ես ձեզ ոչ հարկայնությունից եմ հարցնում, ոչ կառուցվող մակերեսից եմ հարցնում, դա երբ ճարտարապետը բարեհաճի քննարկում անի, էլի կքննարկենք:</p> <p><i>Նախաձեռնող կողմը՝ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ի տնօրեն Վ. Դարբինյանը, միջամտեց բնակչի և ճարտարապետի միջև ընթացող խոսակցությանը, հավելելով, որ.</i></p> <p>Անցած անգամվա քննարկումը, որի մասին դուք ասում եք, մենք կամ նախագծող կազմակերպությունը որևէ պարտավորվածություն չունենք անցկացնելու: Դա մենք կազմակերպեցինք, դա մեր ընկերության բարի կամքն էր՝ ձեր մտահոգություններին, ձեր մտավախություններին ծանոթանալու և դրանք քննարկելու համար: Դա օրենքով պարտադրված չէր ոչ մեզ, ոչ նախագծող կազմակերպությանը, դա հանրային լսում չէր: Հանրային առաջին լսումը սա է:</p> <p><u>Բնապահպանության մասնագետ Ք.Սահակյանը և մեկ անգամ հավելեց, որ.</u></p> <p>Որպեսզի անհրճապես այսպես շարունակական դիսկուսիայի չվերածվի, առաջարկում եմ հետևյալը. բոլոր նախագծային լուծումները՝ համապատասխան գծագրերով՝ համայնքապետարանում առկա է, ցանկացած ժամանակ, ցանկացած բնակիչ կարող է մոտենալ քաղաքաշինության վարչություն, համայնքապետարանի ցանցացած վարչություն, իր խնդիրն ասել և նրան այդ ամենը կտրամադրվի: Նույն ձևով դուք կարող եք դիմել նախաձեռնող կողմին, ինձ: Մեր բոլոր կոնտակտային տվյալները հասնելի են նաև Էջմիածնի համայնքապետարանում կամ հենց հիմա մասնակիցների ցուցակից դրանք կարող եք դրանք վերցնել: Եթե որևէ հարց ունեք, իմացեք, որ ցանկացած ժամանակ բաց ենք նախագծին անչվող ցանկաձագ ինֆորմացիա, նախագծային լուծումների մանրամասներ տրամադրելու համար, իսկ թղթային հակիրճ ինֆորմացիան արդեն տվեցի, եթե դրանից էլ հարցեր կառաջանան էլի պատրաստ ենք: Բացի դրանից իմացեք նաև հաշվետվությունը հասանելի է լինելու նաև ՇՄՆ կայքում: Ցանկացած որ այն կարող է նայել և իր առաջարկություններն ու դիտողություններն ուղարկել նաև նախարարություն: Դրա համար դեռևս բավական ժամանակ կա: Այս ամենը հենց նրա համար է, որ բնակիչներն իրենց կարծիքները, եթե ինչ-որ առարկություններ ունեն, կարողանան ժամանակին լուծել՝ բնակչի հետ համագործակցելով, որպեսզի բոլոր կողմերն էլ գոհ մնան: Դեռևս ունենք երկրորդ հանրային լսում: Նայում եք, կարողում եք, հարցերը հանում եք, կարող եք մինչև երկրորդ հանրային քննարկումը դիմել, կարող եք երկրորդ հանրային քննարկմանը դիմել:</p>
<p><u>Էջմիածնի քաղաքի բնակիչ</u> Երկրորդ հանրային լսումը երբ է:</p>	<p><u>Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ</u> Նվազագույնը 1.5 ամիս հետո ի նկատի ունեցեք:</p> <p><u>Արթուր Մակարյանը՝ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ը ներկայացուցիչը, հավելեց.</u> Ասեմ, որ բոլոր նորմերով նախագիծն անցնում, է, եթե որևէ նորմով այն չի համապատասխանում, թղթերը նորից վերադարձվում է</p>





Դարձյալ ներկաների միջև ծավալվեց նախատեսվող գործունեության հետ ընդհանրապես կապ չունեցող բանավեճ, որի արդյունքում Քրիստինե Սահակյանը հորդորեց չքննարկել այլ հարցեր, թե ով ինչ պիտի առնի կամ չառնի: Նա ներկաներին հիշեցրեց, որ այսօրվա քննարկումը վերաբերվում է կինոյի շենքի տարածքին և խնդրեց չընդլայնվել:


Նա հորդորեց նախագծի շրջանակներից դուրս հանրային լսմանը որևէ հարց չքննարկել և հանրային լսումը համարել ավարտված, եթե նախագծի հետ կապված այլ հարցեր չկան:


Մասնակիցների կողմից այլ հարցեր չբարձրացվեցին:

Մասնակիցների ցուցակը և հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

Քննարկումների պատասխանաբար՝  Մ. Պողոսյան,
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
խորհրդակալ

Քննարկումների վարող՝  Վասպուրական Դավթյան,
Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պետական

Արձանագրող՝  Ք. Սահակյան,
բնապահպանության մասնագետ

Ձեռնարկող՝  Վ. Դարբինյան,
«ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ, տնօրեն

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

« 23 » փետրվար, 2024

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածին, Ս. Մեսրոպ Մաշտոցի փողոց 1/2 հասցեում բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի վերաբերյալ (1-ին փուլի հանրային քննարկում)

Մասնակիցների ցուցակ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1. Բիբոսյան Եվա Արսենի Կարենի	բնակարանային հարցերի և կոմունալ տնտեսության գլխավոր օգնական	091589927	
2. Գրիգորյան Զարգարյան	ՀՀ Գրանցման կենտրոնի վարչի օգնական	099390152	
3. Աղաբաբյան Արմենակ	Աղմուկի ցուցանիշի օգնական	055405540	
4. Հարությունյան Հարություն	Հարկադրության օգնական	091565579	
5. Չարսբերյան Վահագն	Չարսբերյանի օգնական	099950095	
6. Գրիգորյան Գրիգոր	Բնակիչ		
7. Բաղդասարյան Կարենի Կարենի	Անձնական տնտեսական հարկերի օգնական	094771178	
8. Գրիգորյան Զարգար	Գրանցման կենտրոնի վարչի օգնական	099-22-28-16	
9. Գրիգորյան Գրիգոր	Բնակիչ	077-002319	
10. Արմենակյան Արմենակ	Գրանցման կենտրոնի վարչի օգնական	098123438	
11. Արսենյան Արսեն	Հրահանգի օգնական	091438669	

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
12. Արսենյան Արսեն	107 շենքի օգնական	099-00-21-21	
13. Գրիգորյան Զարգար	107 շենքի օգնական	095-25-15-35	
14. Չարսբերյան Վահագն	107 շենքի օգնական	093092209	
15. Արսենյան Արսեն	107 շենքի օգնական	094-45-00-25	
16. Հարությունյան Հարություն	Հարկադրության օգնական	093781177	
17. Արսենյան Արսեն	Գրանցման կենտրոնի վարչի օգնական	055-359-859	
18. Արսենյան Արսեն	107 շենքի օգնական	098875801	
19. Գրիգորյան Զարգար	107 շենքի օգնական	093576482	
20. Արսենյան Արսեն	Գրանցման կենտրոնի վարչի օգնական	095939973	
21. Գրիգորյան Զարգար	Հարկադրության օգնական	044930093	
22. Գրիգորյան Զարգար	Հարկադրության օգնական	096756585	
23. Արսենյան Արսեն	Հարկադրության օգնական	098470601	
24. Գրիգորյան Զարգար	Բնակիչ	043200098	
25.			